


ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԱՄԵՆԱԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ


10.06.2019 15:44



2019 թվականի հունիսի 10-ին ամենատարեց փաստաբանի՝ Հրաչիկ Գոգինյանի ծննդյան 95-ամյակը նշվել է Փաստաբանների պալատում: Հոբեյարին շնորհավորել է փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, Պալատի խորհրդի անդամներ Սիմոն Բաբայանը, Մելանյա Առուստամյանը, Նելլի Հարությունյանը: Ամենատարեց փաստաբանին շնորհավորել է նաև ամենաերիտասարդ փաստաբան Նորայր Ավագյանը: Նա 22 տարեկան է և փաստաբանական գործունեության արտոնագիր ստացել է օրեր առաջ՝ մայիսի 24-ին: Շնորհավորելով հոբեյարին՝ Արա Զոհրաբյանը փաստաբանների պալատի անունից հանձնել է անվանական կոնյակ և շնորհավորագիր ու նշել, որ երիտասարդները պետք է մշտապես հիշեն իրենց ավագ գործընկերներին:







Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })